انجمن فرهنگی و ورزشی ارامنه سیپان
ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ «ՍԻՓԱՆ» ՄԻՈՒԹԻՒՆ
ARMENIAN CULTURAL "SIPAN" SOCIETY

Թւական՝ 10.05.22
Համար՝ 56.26.22

Իրանում ՀՀ արտակարգ և լիազօր դեսպան
Յարգոյ պրն.Արսէն Աւագեան,

Բողոքի նամակ

Սրտատրոփ ու անհանգստօրէն հետևում ենք այս օրերի մեր հայրենիքում տեղի ունեցող իրադարձութիւններին: Այժմ կրկին մեր դարաւոր արիւնարբու թշնամին վտանգելով մեր հայրենիքի գոյութիւնը ու անկախութիւնը իր պայմանները թելադրում հարևանների չակերտաւոր խաղաղ ապրելու համար: Մեր հայրենիքի անկախութիւնը ձեռք է բերուել շատ դժւար ու ոչ մի գիտակից հայ չի համակերպւի այն վտանգւած տեսնելու պարագայի հետ: Սակայն նկատելի է, որ ներկայիս ՀՀ իշխանութիւնը առանձնայատուկ կանխարգելման միջոցներ չի ձեռնարկում ակնառու վտանգի դէմ և սա տեսնելով բացարձակ ճիշտ չի համարւում այս իշխանութեան գործունէութեան շարունակութիւնը: Արցախը երբեք չի կարող լինել հազիւ մէկ դար պատմութիւն ունեցող Ադրբեջանի կազմում, որը ոչ սեփական ուժով ձեռք բերած «յաղթանակ»-ից գոռոզացած ցանկանում է իր պայմանները թելադրել տարածաշրջանում:

Դատապարտելի է ՀՀ իշխանութեան պարտուողի դերով հանդէս գալը և առաւել ևս յանուն հայրենիքի և ազգի դուրս եկած ցուցարարների նկատմամբ ոստիկանութեան կատարւող անմարդկային, դաժան և մարդու իրաւունքների դէմ վերաբերմունքը, ցուցարարները պայքարում են յանուն Հայաստանի և Արցախի աշխարհների խաղաղ

ZARKESH ALLEY, BAKHTAR ST.,
DAMAVAND AVE., TEHRAN 1644944341
TEL.: 77819191-77828140 FAX: 77823303

تهران، خیابان دماوند، ایستگاه پل، خیابان مسیل باختر، کوی زرکش
پلاک ۷ کذ پستی: ۱۶٤٤۹٤٤۳٤۱
تلفن: ۷۷۸۲۸۱٤۰ ، ۷۷۸۱۹۱۹۱ فاکس: ۷۷۸۲۳۳۰۳

www.sipanorg.org
email: info@sipanorg.org

ու ազատ լինելու համար և նրանց ընդիմացողը դաւաճանում է մեր հայրենիքին և նրա ազատ ապրելու իրաւունքին։

Մեր միութիւնը և միութենականները չեն կարող անտարբեր լինել այս ամենի նկատմամբ։ Միանում ենք Հայաստանի ցուցարար մեր հայրենակիցներին ու յայտնում ենք մեր աջակցութիւնը այս պայքարում։

Յարգանօք՝
Հ. Մ. «Սիփան» Միութեան
Վարչութիւն
Նախագահ՝ Արա Մկրտչեան

Քարտուղար՝ Քարմէն Չարմահալեան

ZARKESH ALLEY, BAKHTAR ST.,
DAMAVAND AVE., TEHRAN 1644944341
TEL.: 77819191-77828140 FAX: 77823303

تهران، خیابان دماوند، ایستگاه پل، خیابان مسیل باختر، کوی زرکش
پلاک ۷ کد پستی: ۱۶۴۴۹۴۴۳۴۱
تلفن: ۷۷۸۲۸۱۴۰، ۷۷۸۱۹۱۹۱ فاکس: ۷۷۸۲۳۳۰۳

www.sipanorg.org
email: info@sipanorg.org